ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՊԱՐՈՆ ՍԱՍՈՒՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

31.07.2023թ-ից մինչև 31.01.2024թ-ը աշխատաժամանակի վերաբերյալ

1) Իմ իրավասությունների շրջանակներում մասնակցել եմ Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստական աշխատանքներին և ներկայացրել անմիջական ղեկավարին.

2) Մասնակցել եմ քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների ուսումնասիրությանը ու համապատասխան ընթացքի ապահովմանը և արդյունքների մասին ներկայացրել անմիջական ղեկավարին.

3) Հաշվառել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի (այսուհետ՝ Մարզ) համայնքներից ստացված շինարարության թույլտվությունները,ամփոփել և ներկայացրել անմիջական ղեկավարին.

4) Մասնակցել եմ մարզում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի վերահսկմանը և տեղեկատվություն ներկայացրել անմիջական ղեկավարին.

5) Մասնակցել եմ մարզի տարածքում իրականացվող պետական ծրագրերով ավարտական շինարարական աշխատանքներին.

6) Մասնակցել եմ մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային կազմակերպությունների, առողջապահական, սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների ուսումնասիրմանը.

7) Մասնակցել եմ նախարարություններից, մարզի համայնքների ղեկավարներից և այլ հաստատություններից ստացված առաջարկությունների քննարկմանը.

8) Մասնակցել եմ առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի, գրությունների նախապատրաստմանը և ներկայացրել անմիջական ղեկավարին.

9) Կատարել եմ անմիջական ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականները:

Քաղաքաշինության, հողաշինության

և ենթակառուցվածքների վարչության փորձագետ՝ Արմեն Սարգսյան

31.01.2024թ.